ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
6 դեկտեմբերի 2022 թվականի N 490-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 3 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՐԱՁԳԱՐԱՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով «Կապանի N 3 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Մնացականյանի 2022 թվականի դեկտեմբերի 5-ի գրությունը՝

որոշում եմ

1. Հանձնարարել «Կապանի N 3 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Մնացականյանին՝ կազմակերպել նշված դպրոցի հրաձգարանի վերանորոգման աշխատանքները՝ հաշվի առնելով խնդրի կարևորությունը և անհետաձգելիությունը:

2. Հանձնարարել ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ կատարել սույն որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները և արդյունքների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:

06.12.2022

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 6
ք. Կապան